ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքաշինական եւ տարածական պլանավորման ոլորտում ՀՀ համայնքներին տեխնիկական խորհրդատվության եւ օժանդակության տրամադրման մասնագիտական աջակցության

1. **Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր**

Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխություններ

(**ՀՀ կառավարության** 2011 **թվականի դեկտեմբերի** 29-**ի** N 1920-**Ն որոշում**)

Հարց 1. Ի՞նչ ընթացակարգով են փոխվում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխությունների առաջարկությունները:

Հարց 2. Նշել առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության առաջարկության վերաբերյալ փաթեթի լրակազմը:

Հարց 3. Նշել այն շինարարական նորմերը, որոնք պետք է ապահովված լինեն առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ առաջարկությունները:

3. Դասախոսություն 3

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշում

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր



3. Դասախոսություն 3

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշում

ԵՐԿՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ	• Տարաբնակեցման համակարգի բազմագործոն վերլուծություն և հեռանկարային առաջարկներ	ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԳԻԾ
ՄԱՐԶԻ/ՄԻԿՐՈՌԵ-ԳԻՈՆԻ ՄԱԿԱՐԴԱԿ	• Մարզի տարածքային հատակագծային կառուցվածքի և ենթակառուցվածքների վերլուծություն և հեռանկարային առաջարկներ	ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
ՀԱՄԱՅՆՔԻ/ԲՆԱԿԱ-ՎԱՅՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ	• Գլխավոր հատակագծի հատակագծային կառուցվածքի վերլուծություն և հեռանկարային առաջարկներ	
ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ	• Գոտևորման նախագիծ	

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈՍԽՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

- **Հաստատված գլխավոր հատակագծերի դեպքում հողամասի նպատակային նշանակության փոփոխության**

- **Հաստատված միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթերի դեպքում հողամասի նպատակային նշանակության փոփոխության**

- Համայնքի ղեկավարը ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 10-րդ կետի համաձայն 56-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնում է Կոմիտե՝ համաձայնեցման:

- Առանձին հողամասի նպատակային նշանակության և 24-րդ կետի 4-րդ ենթակետում նշված հողերի գործառնական նշանակության փոփոխության մասով Համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու նպատակով համայնքի ղեկավարը մարզպետին ներկայացնում է առաջարկություն՝ կցելով Կարգի 56-րդ և 57-րդ կետերում նշված փաստաթղթերը: Մարզպետն իր դրական եզրակացությամբ առաջարկությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Լիազոր մարմին, իսկ բացասական եզրակացության դեպքում, իրավական ակտի կոնկրետ դրույթին հղմամբ հիմնավորելով կարծիքը, 5 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է համայնքի ղեկավարին:

- Հողամասի նպատակային նշանակության փոփոխման փաթեթը Լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվում է և համաձայնություն տալու դեպքում՝ ստանալու հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կարգի 11-րդ կետի համաձայն ներկայացվում է շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը կամ առարկություններ ունենալու դեպքում վերադարձնում է Իրավասու մարմնին՝ կցելով համապատասխան հիմնավորումներով իր առարկությունները:

- Շահագրգիռ մարմինները տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի կամ Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները 15 աշխատանքային օրվա (Լրամշակված փաթեթի դեպքում՝ 5 աշխատանքային օրվա) ընթացքում ներկայացնում են Լիազոր մարմին: Շահագրգիռ մարմինների կողմից 15 աշխատանքային օրվա (Առանձին հողամասի դեպքում՝ 5 աշխատանքային օրվա) ընթացքում կարծիք չներկայացնելու դեպքում համարվում է, որ շահագրգիռ մարմինը քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ առարկություններ չունի:

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈՍԽՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկություններն ու դիտողություններն, ընդ որում՝

Բոլոր շահագրգիռ մարմիններից դրական կարծիքներ ստանալու դեպքում, Լիազոր մարմինը կազմում է Հանձնաժողովի դրական եզրակացությունը և 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում Իրավասու մարմին և Հանձնաժողովի անդամներին.

Հողամասի նպատակային նշանակության փոփոխության լրամշակված փաթեթը Լիազոր մարմինը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում և համապատասխան մարմին (մարմիններ) ներկայացնում է իր դիտողությունները, իսկ համաձայնեցման կամ լրամշակումն անբավարար գտնելու դեպքում փաթեթը վերադարձնում է Իրավասու մարմնին:

Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները համապատասխան մարմինների կողմից կարող են հաստատվել միայն Հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում: Հանձնաժողովի եզրակացությունները ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈՍԽՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը տրվում է, եթե համաձայնեցման ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կարծիքները դրական են: Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, նախագծման առաջադրանքների և առանձին հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների վերաբերյալ կարծիքները Լիազոր մարմին են ներկայացվում դրանք ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ կամ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ: Նշված ժամկետում շահագրգիռ մարմինների կողմից առարկություն չներկայացվելու դեպքում՝ տվյալ մարմնի կարծիքը համարվում է դրական:

Հանձնաժողովի նիստում (կամ հարցման արդյունքում) հարցի վերաբերյալ միասնական կարծիք չձևավորելու դեպքում, Լիազոր մարմինն ամփոփում է կարծիքները և ներկայացնում Վարչապետի աշխատակազմ՝ մշտապես գործող տարածքային զարգացման և շրջակա միջավայրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) առաջիկա նիստում զեկուցելու համար: Կոմիտեի որոշումը հիմք է հարցի վերաբերյալ Հանձնաժողովի վերջնական որոշումն ընդունելու համար:

Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը համայնքի ավագանու կողմից կարող է հաստատվել միայն Հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության առաջարկության վերաբերյալ փաթեթի լրակազմը:

1) ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի՝ «ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշում,

2) ՀՀ կառավարություն 2005 թվականի դեկտեմբերի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքները կառուցապատելու կանոնակարգման միջոցառումների մասին» N 2404-Ն որոշում

3. Դասախոսություն 3

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշում

1) ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր,

2) ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմեր,

3) ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի՝ «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշում,

4) ՀՀ կառավարություն 2015 թվականի մարտի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում:

5) ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 792-Ն որոշում:

6) Այլ օրենքներ ու իրավական ակտեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 66-Լ ՀՐԱՄԱՆՈՎ

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմման

1. Ուղեցույցում տրվում են հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով մշակվող փաթեթի կազմին ֆ բովանդակությանը ներկայացվող պահանջները,
2. Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն ընթեռնելի, սահմանված կարգով վավերացված չպարունակեն լրացուցիչ ավելորդ տեղեկատվություն,

III. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Փաստաթղթային փաթեթը ներկայացվում է տեղական ինքնակառավարման (ՏԻՄ) մարմինների կողմից կամ տարածքային կառավարման մարմինների միջնորդությամբ՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգի:

Փաստաթղթային փաթեթի լրակազմությունը վավերացվում է տեղական ինքնակառավարման (ՏԻՄ) մարմնի կամ տարածքային կառավարման մարմնի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի կողմից:

Ամբողջական փաթեթը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով:

3. Դասախոսություն 3

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշում

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆ